



Australian Government



Armenian



We speak your language ☎ 13 1202

Բարի եկաք Centrelink

Ուղեցույց մը՝ մեր վճարումներուն եւ սպասարկութիւններուն:

Ի՞նչ է Centrelink ը

Centrelink ը կարգ մը վճարումներ եւ սպասարկութիւններ մատուցող Աւստրալիական կառավարական գործակալութիւն մըն է: Մեր յաճախորդներն են՝

- հանգստեան կոչուած մարդիկ,
- աշխատանք փնտրող մարդիկ,
- ուսանողներ եւ երիտասարդներ,
- անկարողութիւն, հիւանդութիւն կամ վսասուածք ունեցողներ,
- հոգատարներ,
- այրիներ եւ փայնակ ծնողներ, եւ
- ընտանիքներ

Սպասումի ժամանակամիջոց մը կա՞յ վճարում ստանալէ առաջ:

Ո՛չ, ձեր վճարումը կրնաք անմիջապէս ստանալ եթէ՝

- գաղթական մըն էք
- մնայուն մարդասիրական այցեգիր ունիք (կամ անոնց անմիջական ընտանիքի անդամ էք), կամ
- մէկը որ Աւստրալիա մուտք գործած է յատուկ առժամեայ այցեգիրով, բայց ներկայիս մնայուն այցեգիր ունի:

Եթէ նոյնիսկ յատուկ տեսակի առժամեայ բնակութեան այցեգիր ունիք, օրինակ՝ Temporary Protection Visa (Արժամեայ Պաշտպանութեան Այցեգիր) կամ Return Pending Visa (Վերադարձը Արկախ Այցեգիր) կրնաք ընտանեկան վճարումներ ստանալ երեխաներու հոգատարութեան ծախսին օգնելու համար: Կրնաք նաեւ ստանալ Rent Assistance (Վարձքի Օգնութիւն):

Իսկ եթէ ներգաղթած էք

Նոր ներգաղթողներ ընդհանրապէս չեն կրնար անմիջապէս վճարուիլ – երկու տարի պէտք է որ Աւստրալիոյ մէջ բնակիք վճարում ստանալէ առաջ: Եթէ ձեր պարագաները փոխուին եւ դժուարութեան մէջ կը գտնուիք ձեր կամքէն անկախ պատճառներով, կրնայ ըլլալ որ կարենաք ստանալ Special Benefit (Մասնայատուկ Նպաստ):

Միշտ նախ ստուգեցէք Centrelink ի հետ որովհետեւ նոյնիսկ եթէ վճարում մը չէք կրնար ստանալ, այլ տեսակ օգնութիւն մատչելի է:

Ի՞նչպէս կարելի է դիմել Centrelink ի վճարումներու Համար

Անհրաժեշտ է դիմումագիր մը ամբողջացնել եւ տանիլ ձեր շրջանի Centrelink ի գրասենեակը: Անհրաժեշտ է նաեւ ձեր ինքնութիւնը հաստատող վաւերաթուղթեր ունենալ, Tax File Number եւ դրամատան հաշիւի մանրամասնութիւններ:

Եթէ ընդունուիք վճարումի համար, ան երկու շաբաթը անգամ մը ձեր հաշիւին մէջ պիտի դրուի:

Թարգմանողներ

Centrelink ը կրնայ օգնել ձեզի դիմումագրերը ամբողջացնելու, եթէ անհրաժեշտ է, եւ ձեր թարգմաններ կը տրամադրէ եւ ձեր թարգմանութիւն Centrelink ի առնչուող գործերու վերաբերեալ:

Ինդրեմ նկատի ունեցէք, Centrelink ի թարգմանները անկողմասկալ են եւ գաղտնապահ :

Ի՞նչ պետք է ընել շարունակել ստանալու Համար ձեր Centrelink ի վճարումը

Որոշ օրէնքներ եւ պայմաններ կան որպէսզի շարունակէք ստանալ ձեր Centrelink ի վճարումը, ինչպէս օրինակ դիմումագրեր յանձնել կամ որոշ գործեր ընել: Եթէ չընէք, ձեր վճարումը կրնայ ազդուիլ կամ նոյնիսկ դադարեցուիլ:

Նաեւ Centrelink ին պետք է տեղեակ պահէք ձեր կամ ձեր կենակիցի մանրամասնութիւններու փոփոխութիւններու մասին, ինչպէս օրինակ՝

- ձեր հասցէն
- եթէ ամուսնանաք կամ բաժնուիք
- որոշէք արտասահման երթալ,
- սկսիք կամ դադարիք ուսանել, աշխատանքէ, կամ
- ձեր եկամուտը փոխուի:

Եւ, պետք է պատասխանէք Centrelink ի նամակներուն:

Հեռաձայնեցէք Centrelink ին ձեր լեզուով

Հեռաձայնեձէք **13 1202** Centrelink ի հետ խօսելու ձեր լեզուով եւ ստանալու ձեզի անհրաժեշտ բոլոր տեղեկութիւններն ու օգնութիւնը, ներառեալ՝

- ժամադրութիւն առնելու (թարգմանի մը հետ, եթէ անհրաժեշտ է)
- ձեր հասցէի փոփոխութեան մասին
- ձեր մանրամասնութիւններու փոփոխութիւններու մասին
- պարզապէս ձեր վճարումի մասին հետաքրքրուելու:

Ի՞նչ կը պատահի եթէ չէք Համաձայնիր Centrelink ի մէկ որոշումին Հետ

Centrelink ի առած բոլոր որոշումները կրնան վերաքննուիլ:

Եթէ գոհ չէք Centrelink ի մէկ որոշումով, կրնաք վերաքննութեան դիմել: Նախ խօսեցէք ձեր շրջանի Centrelink ի գրասենեակին:

Գաղտնապահութիւն ձեր տեղեկութեան

Centrelink ը կը պաշտպանէ ձեր անձնական տեղեկութիւնը, եւ կրնայ յայտնել միայն այն պարագային ուր օրէնքը կ'արտօնէ կամ ուր ձեր արտօնութիւնը կը տրուի:

Տեղեկութիւն ձեր լեզուով

Centrelink ը շատ մը լեզուներով թարգմանուած գրքոյկներ ունի, շրջաբերական նամակներ եւ թերթիկներ որոնք կարելի է ունենալ Centrelink ի գրասենեակներէն կամ մեր համացանցի էջէն՝ www.centrelink.gov.au

Չայնասիիւս եւ թերթեր

Centrelink ը իր վճարումներուն եւ սպասարկութիւններուն մասին տեղեկութիւն կու տայ

- կանոնաւոր ձայնասփռումներով SBS Բատիոյի եւ համայնքային բատիոկայաններէ Աւստրալիոյ տարածքին եւ,
- շաբաթական յօդուածներով կարգ մը բազմամշակութային թերթերու մէջ:

Արագ ստուգումի ցուցակ

- Միշտ ստուգեցէք Centrelink ի հետ տեսնելու համար թէ կրնա՞ք վճարուիլ – ուրիշներու վրայ մի ապաւինիք տեղեկութեան համար:
- Յիշեցէ՛ք հետեւելու Centrelink ի օրէնքներուն եւ պայմաններուն:
- Կրնաք Centrelink ի որեւէ որոշումի վերաքննութեան դիմել եթէ կը կարծէք որ սխալ է:
- Եթէ կ'ուզէք Centrelink ին խօսիլ ձեր լեզուով, հեռաձայնեցէք՝ **13 1202** թիւին:
- Վերջապէս, բոլոր Centrelink ի սպասարկութիւնները ՁՐԻ են:

Անգլերէնէ գատ այլ լեզուներով յաւելեալ տեղեկութեան համար հեռաձայնեցէ՛ք՝ **13 1202*** թիւին: Այցելեցէք մեր համացանցի էջը՝ www.centrelink.gov.au

* 13 ով սկսող թիւերուն կարելի է հեռախօսել հասարակ հեռաձայնի սպասարկութենէ մը Աւստրալիոյ մէջ որեւէ մէկ տեղէ՝ տեղական հեռախօսի արժեքով (հեռախօսի գինը կրնայ տարբերիլ հեռաձայնի սպասարկութիւնը մատակարարողէն): 1800 ով սկսող թիւերուն հեռախօսելը ձրի է: Հանրային վճարովի հեռաձայններէ եւ բջիջային հեռաձայններէ եղած խօսակցութիւններու գիները աւելի սուղ են: